ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հունիսի 2023 թվականի N: 215 -Ա ք.Գյումրի

ՍԱԹԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի, 163-րդ հոդվածի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Սաթենիկ Սարգսյանի 2023 թվականի հունիսի 15-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Հոռոմի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սաթենիկ Սարգսյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 13-ի N:670-Ա որոշմամբ տեղափոխված 2022 թվականի ամենամյա նվազագույն արձակուրդից մնացած 10 աշխատանքային օրը՝ 2023 թվականի հունիսի 19-ից 30-ը ներառյալ:
2. Սաթենիկ Սարգսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Հոռոմի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ընտանեկան բժիշկ Սրբուհի Մելքոնյանին:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է